ԷԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ[1]

Պողոսյան Գ. Ս. (ՀՀ ԳԱԱ, Երևան, Հայաստան)
gayane_surenovna@yahoo.com
Գասպարյան Ա. Մ. (ՀՀ ԳԱԱ, Երևան, Հայաստան)
anahit-movsesi@mail.ru
Ներկայացման ամս. 2.07.2020
Գրախոսման ամս.30.07.2020
Տպագրության ընդունման ամս.15.09.2020

Հետազոտության նպատակն է ուսումնական հաստատություններում բարձրացնել սովորողների քաղաքացիական կոմպետենտությունը էթնո-մշակութային ավանդույթների ներմուծմամբ: Ողջ աշխարհում սրվել են ազգային խնդիրները և առաջացել են հակասություններ, որոնց լուծման համար անհրաժեշտ է միջմշակութային և ազգամիջյան փոխազդեցության նոր ձևեր:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է իրավիճակի վերլուծություն, ուսումնասիրվել են հայ և Հայաստանում ապրող ժողովուրդների մշակութային ավանդույթներն ու արժեքները, անցկացվել է սոցիոլոգիական հարցում երկու փուլով և կատարվել արդյունքների վերլուծություն, ինչպես նաև դուրս են բերվել համապատասխան առաջարկություններ:

Արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ ավանդույթների և սովորությունների ուսումնասիրությունը տանում է դեպի իր ժողովրդի և այլազգիների մշակույթի զարգացմանը, ձևավորվում է սեր, պատասխանատվություն և դիրքորոշում հայրենիքի, Երկրի նկատմամբ:

Հասարակությունը օբյեկտիվ կարիք ունի կոմպետենտ քաղաքացի ձևավորելուն, ով ի վիճակի կլինի լավագույնս իրականացնել քաղաքացիական իրավունքները, պարտավորությունները, կունենա քաղաքացիական դիրքորոշում և մասնակցություն երկրում իրականացվող գործընթացներին: Սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորմանը անմիջականորեն նպաստում են էթնո-մշակութային սովորույթները, որոնց ներմուծումը ուսումնական հաստատություններ պոտենցիալ հնարավորություն կստեղծի դրանց կիրառման համար:

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿ-ի (18RF-003) և ՀՀ ՌՀ (ՌԴ) "Ավագ դպրոցի սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդել" գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:

Քաղաքացիական կոմպետենտության ձևավորման համար անհրաժեշտ է նախ ձևավորել կարողունակություններ և սովորողների, և մանկավարժների մոտ, որոնք կյանքի տարբեր պայմաններում՝ ուսուցման (ինքնակրթության) տարբեր իրավիճակներում կկարողանան որոշում կայացնել՝ ճգնաժամի և ռիսկի պայմաններում, խնդիրները բացահայտել և տալ լուծումներ, նպատակային և պատասխանատու գործողությունների իրականացել, զարգացնելով ստեղծարար և քննադատական մտածողություն:

Հանգուցային բառեր՝ *քաղաքացիական կոմպետենտություն, էթնոմշակութ, մշակութային ավանդույթներ, սովորույթներ, սոցիոլոգիական հարցում:*

Ներածություն Ժամանակակից աշխարհը գլոբալիզացիայի գործընթացների և միջմշակութային հաղորդակցությունների աշխարհ է: Այս գործընթացներն ուղեկցվում են ժողովուրդների և մշակույթների համակեցության հակասությունների մեծացմամբ, որոնց լուծման համար անհրաժեշտ է միջմշակութային և ազգամիջյան փոխազդեցության նոր ձևեր, ինչպես նաև տարբեր սոցիալ-մշակութային սուբյեկտների միջմշակութային հաղորդակցման ունակության համակարգված ընկալում: Հասարակությունը օբյեկտիվ կարիք ունի կոմպետենտ քաղաքացի ձևավորելուն [1], [2], [7]:

Երբ երկիրը գտնվում է ճգնաժամի մեջ, սրվում են ազգային խնդիրները և առաջանում են հակասություններ: Յուրաքանչյուր էթնիկ խումբ հետևելով և հասկանալով իր սեփական մշակույթը, բնական օբյեկտներն ու երևույթները, իմանալով նաև մյուսների ոչ միայն էթնիկ մշակույթը, այլ նաև նրանց անցյալը և ներկան, կարող է արդյունավետ լուծել բազմազգ միջավայրում ապրելու ու փոխհամագործակցելու խնդիրը:

Շատ երկրներում ապրում են տարբեր էթնիկ ծագմամբ քաղաքացիներ, ինչպես նաև զգալի թվով ներգաղթյալներ: Կյանքի առաջնահերթությունների ձևավորման, ինչպես նաև արժեհամակարգի վրա ազգային էթնոսի փոխհարաբերությունների և ազդեցության խնդիրը միշտ եղել և մնում է ինչպես հայրենի, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների հետաքրքրության առարկան [3], [4]:

Այսօր հասարակությունն օբյեկտիվ կարիք ունի կոմպետենտ քաղաքացու, ով ի վիճակի կլինի լավագույնս իրականացնել քաղաքացիական իրավունքները և պարտականությունները: Դրան էլ միտված է կրթության բովանդակության նորացումը, որը պայմանավորված է կրթության բովանդակության նպատակների փոփոխությամբ, որտեղ գիտելիքներին, հմտություններին և կարողություններին ավելանում է կոմպետենտության բաղադրիչը: Միաժամանակ, քաղաքացիական կոմպետենտությունը հանդես է գալիս որպես ինտեգրալ կոմպետենտություն, որը հիմնված է մի շարք առանցքային կոմպետենտությունների վրա: Վերջինիս հիմքում ընկած է սովորողների մոտ քաղաքացիական իրավասության, սոցիալական ակտիվության, բարոյական, քաղաքացիական

դիրքորոշման ձևավորման և քաղաքացիական պարտավորությունների արդյունավետ իրականացման պատրաստակամությունը [6]:

Կրթության բովանդակության նպատակի այս փոփոխությունը արդիական է: Ըստ գիտնականների պնդման անհրաժեշտ է մի կողմից սովորողներին նախապատրաստել գիտակից կյանքի և ժողովրդավարական պետության մեջ ապրելուն, մյուս կողմից նպաստել իրավական գիտակցության ձևավորմանը [14]:

Այս խնդիրը դրված է տարբեր երկրների կրթության համակարգի մասնագետների առջև: Դրա մասին նշվում է կրթության համակարգի զարգացման նորմատիվային, ռազմավարական փաստաթղթերում: Ըստ տարբեր երկրների կրթության արդիականացման հայեցակարգերի կրթական համակարգը պետք է ձևավորի անձանց, ովքեր ունակ կլինեն ապրել ոչ միայն քաղաքացիական հասարակության և իրավական պետության մեջ, այլև պատրաստ կլինեն լիովին կիրառել քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Սովորողների քաղաքացիականացման որակի բարձրացմանը, քաղաքացիական կոմպետենտության ձևավորմանը անմիջականորեն նպաստում են էթնո-մշակութային սովորույթները, որոնց ներմուծումը ուսումնական հաստատություններ պոտենցիալ հնարավորություն կստեղծի դրանց կիրառման համար [10],[12]:

«Քաղաքացիական կոմպետենտության» ֆենոմենի մասին կուտակված գիտատեսական գիտելիքների շտեմարանում փոքրաթիվ են մանկավարժական և հոգեբանական համալիր հետազոտությունները, որոնք ուսումնասիրում են ազգային մշակութային ավանդույթների կիրառման հնարավորությունները [9]:

Քաղաքացիական կոմպետենտությունը ներկայացվում է որպես՝ սուբյեկտի կողմից քաղաքացիականացման կոմպետենտության միասնության տիրապետում, պատրաստակամության և ունակությունների միասնություն, որը թույլ է տալիս ակտիվ, արդյունավետ և պատասխանատու կերպով վերահսկել ժողովրդավարական հասարակության անդամի իրավունքներն ու պարտավորությունները, կիրառելով ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները և քաղաքացիական որակները [6], [8]:

Եթե խորհրդային տարիներին քաղաքացիական կրթության մեջ շեշտադրվում էր գաղափարական բաղադրիչը, հետխորհրդային շրջանում, քաղաքացիական կրթության նշանակության մեծացման հետ զուգընթաց (որպես պետությունների գոյատևման համար անհրաժեշտ պայման) ի հայտ են գալիս վերջինիս խնդիրները լուծելու տարատեսակ և նորովի մոտեցումներ [5], [11]:

Հետազոտություն և մեթոդներ: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են հայ և Հայաստանում ապրող ժողովուրդների մշակութային ավանդույթներն ու արժեքները [2], [9]:

Սովորողների կողմից մշակութային ժառանգության և մշակույթների փոխառության ընկալման խնդրի հիմքում ընկած է ազգային և համամարդկային ներդաշնակության հարցերի մշակումը, այն առկա է փիլիսոփաների, պատմաբանների, մշակութաբանների և արվեստագետների աշխատանքներում [7]:

Ազգային մշակույթին նոր սերունդներին մերձեցնելը դառնում է մեր ժամանակների մանկավարժական խնդիր, քանի որ յուրաքանչյուր ազգ ոչ միայն պահպանում է պատմականորեն եկած դաստիարակման ավանդույթները, այլև ձգտում է ապագայում դրանք փոխանցել հաջորդ սերունդներին՝ ազգային դիմագիծն ու ինքնությունը չկորցնելու նպատակով: Հայ ժողովուրդն իր ստեղծած ավանդույթներում և ավանդազրույցներում արտացոլել է իր հնամենի հավատալիքները, հասարակական կյանքն ու կենցաղը, պատմական բախտորոշ իրադարձությունները և մտածելակերպը: Գոյություն ունեն ավանդույթներ, որոնք առաջացել են հանուն ազատության և ազգային անկախության համար ժողովրդի մղած պայքարի ընթացքում, որոնք կապված են ժողովրդական տոնախմբությունների, երգիչների, նվագողների, գուսանների մրցույթների, ինտելեկտուալ խաղերի, հումորեսկների, ընտանեկան սովորույթների և զանազան ծիսակարգերի՝ ծնունդների, հարսանիքների, հրաժեշտի արարողությունների հետ, երկրագործությանն առնչվող մոտիվները իրենց արտահայտությունն են գտել կիրառական արվեստների՝ քարակոփության, գորգագործության, տարազի, մանրանկարչության, ժողովրդական հեքիաթների մեջ [4], [13]:

Սովորողների հայ և մյուս ժողովրդի ավանդույթների մասին իմացությունը պարզելու նպատակով իրականացվել սոցիոլոգիական հարցում երկու փուլով և կատարվել է վերլուծություն: Հարցմանը մասնակցել են Հայաստանի երեք մարզերի՝ Լոռու, Կոտայքի, Արագածոտնի՝ չորս տարածաշրջանների 197 ավագ դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ և վարչական ներկայացուցիչներ:

Սոցիոլոգիական հարցման առաջին փուլում հարցաթերթիկն ունեցել է 16 հարց, իր ենթահարցերով, որոնք վրաբերվում էին ինչպես հայ այնպես էլ Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների ավանդույթներին: Հստակեցված էին նաև տարիքի, սեռի և ազգության վերաբերյալ հարցերը («անձնագիր»): Հետազոտված սովորողների հիմնական մասը՝ 150-ը հայեր էին, 27 աշակերտ այլազգիներ՝ 10 եզդիներ, 8 ասորիներ, 7 ռուսներ, 1 հույն, որոնք սովորում են հայկական դպրոցներում: Սովորողների մեջ կային նաև նախկինում և հիմա ներգաղթած հայ ընտանիքներից աշակերտներ/ հիմնականում Ադրբեջանից և Սիրիայից/:

Հարցվողները հիմնականում պատասխանել են հարցերին, որոնք վերաբերվել են ՝

- Լեզուներին, գրականությանը/հեքիաթներ, առակներ, ավանդապատումներ և այլն/,
- Կրոնական ավանդույթներին (Սուրբ Ծնունդ, Զատիկ, Վարդավառ, Տյառնընդառաջ և այլն),
- Մշակութային ավանդույթներին (ժողովրդական երգեր, տոներ, բաղադրատոմսեր, գորգեր, շուրջպարեր, տոնավաճառներ և այլն),
- Կրթական (կյանքի, արհեստների, մասնագիտությունների և այլն),

- Կրթական (բարոյական իդեալներ՝ հարգանք նախնիների նկատմամբ, հայրենասիրություն, համախմբվածություն, ազնվություն, ապրումակցում),

- Ընտանեկան ավանդույթներ (հյուրընկալություն, հյուրասիրություն, տարեցների նկատմամբ հարգանք և այլն):

- Սոցիոլոգիական հարցման երկրորդ փուլում հարցումների արդյունքում պարզվել է, որ կան խոչընդոտներ, մշակութային, կրթական նախաձեռնություններն իրականացնելու համար.

- Դպրոցների որոշ մասում ֆինանսական միջոցների պակաս նման նախաձեռնությունների իրականացման համար՝ հագուստ, տեխնիկա, դահլիճ;

- Պատշաճ առաջխաղացում և մշակութային իրազեկվածություն ապահովելու աշխատանքների պակաս՝ քանի որ չեն կարող հաճախել տարբեր մշակութային կենտրոններ՝ արվեստի, սպորտի դպրոցներ և այլն;

- Սահմանափակ թվով կրթական նյութեր՝ այլընտրանքային ծրագրեր, գործիքներ և մասնագիտական ռեսուրսներ;

- Կրթական և մշակութային կազմակերպությունների միջև թույլ համագործակցություն կամ դրա բացակայություն՝ տարբեր ազգությունների համայնքների հետ;

-Դ պրոցների, մշակութային կազմակերպությունների և կազմակերպիչների դրական իմիջի հաստատում;

- Միջհամայնքային համագործակցության խրախուսում:

Արդյունքների վերլուծություն: Հարցվողներից գյուղաբնակները ավելի ծանոթ էին հայ ժողովրդի ավանդույթներին, քան քաղաքաբնակները: 150 աշակերտներ լավ գիտեին իրենց մշակութային ավանդույթները, նշել էին տոներ, ծիսակատարություններ, որոնք բնորոշ էին տվյալ տարածաշրջանին, օրինակ՝ Լոռվա ձմեռ, պանրի տոն, ձմերուկի տոն և այլն: Հարցվածների մոտ 24 տոկոսը մասնակի էր տիրապետում դրանց: Եղած տվյալները ցույց են տալիս (հարցվածների 60 տոկոսը), որ ընտանիքում, դպրոցում, տեղեկատվական ոլորտներից ձեռք բերված գիտելիքների պակաս կա: Ռուս ժողովրդի ամենահայտնի տոների (Մասլենիցա, Զատիկը՝ Սուրբ Ծնունդ և Նոր տարի) մասին գիտեին հարցվածների մոտ 80 տոկոսը: Այնուամենայնիվ, ժողովրդի ավանդույթները ներառում են ոչ միայն տոնակատարություններ, այլ նաև երգեր, պարեր, հագուստ, տոնավաճառներ և հյուրընկալություն, ճաշատեսակ, որոնք ներառված էին հարցաթերթիկներում:

Հարցաթերթի առանցքային հարցերից պարզ է դառնում, որ հարցվողները գիտեն իրենց և մյուս ժողովրդների ավանդույթներից այնքան, որքան անցել են դպրոցում ուսումնառելիս կամ տանը՝ այդ տոները նշելու պատճառով: Հարցվածները սիրում են և գիտեն իրենց ազգային հեքիաթները, առակները, ասացվածքները, հանելուկները, խաղերը, որոնցից շատերի անունները նշված էին: Կար պատասխանների մոտավոր հավասար բաշխում, տարբեր մշա-

կույթների մասին հիմնականում սովորողները տեղյակ են դպրոցից, տեղեկատվական աղբյուրներից, հետաքրքրականն այն է, որ ավելի շատ գիտեն կրոնական տոների մասին:

Հարցումների արդյունքում հստակեցվեցին հետևյալ առաջարկությունները՝

1. Հնարավորություն տալ դպրոցականներին մասնակցել մարզերի մշակութային միջոցառումներին, որոնք վերաբերում են ոչ միայն Հայաստանին այլև մյուս երկրներին;
2. Մշակել մշակութային կրթական ծրագրեր մարզերում միջոցառումներ իրականացնելու համար;
3. Ներկայացնել նոր մոտեցումներ իրավական դաշտում մշակութային կրթության աշխատանքների վերաբերյալ;
4. Աջակցել մշակույթի և կրթության ոլորտների համագործակցության զարգացմանը տեղական և միջազգային կազմակերպությունների օգնությամբ;
5. Վերոնշյալ միջոցառումներին ընդգրկել ծնողական խորհուրդներին;
6. Ներգրավել հայ, ռուս և այլ ազգի մշակույթի և կրթության մասնագետներին ծրագրեր կազմելիս, միջմշակութային միջոցառումներ իրականացնելիս;
7. Ստեղծել կայք՝ մշակութային և կրթական իրազեկվածության մասին;
8. Իրականացնել դպրոցական ծրագիր՝ համալրող գործողություններով հայ և այլ ազգի մշակութային հաստատություններում;
9. Վերականգնել մշակութային օլիմպիադաների անցկացման ավանդույթը;
10. Իրականացնել ոչ ֆորմալ կրթություն՝ անցկացնել առցանց պարապմունքներ, սեմինարներ տարբեր երկրների դպրոցների հետ:

Այսպիսով, ավանդույթների և սովորությունների ուսումնասիրությունը տանում է դեպի իր ժողովրդի և այլազգիների մշակույթի զարգացմանը, ձևավորվում է սեր, պատասխանատվություն և դիրքորոշում հայրենիքի, Երկրի նկատմամբ: Հարցվածների մեծամասնությանը, ըստ պատասխանների կարծում են, որ մարդիկ պետք է պահպանեն իրենց ժողովրդի ավանդույթները, որոնք կօգնեն պահպանել ժամանակի մշակույթը և ամրապնդել ժողովրդի արմատները և կապը մյուս ժողովուրդների հետ:

Եզրակացություն: Նոր կրթական հարացույցի անցմամբ, առաջնայնությունը կտրվի սովորողի մոտ քաղաքացիական կոմպետենտության ձևավորմանը, որն էլ կապահովի իմաստալի և պատասխանատու հասարակական գործունեություն, բարոյական քաղաքական դիրքորոշում և քաղաքացիական պարտավորություններն իրականացնելու պատրաստակամություն՝ որպես հասարակության լիարժեք անդամ:

Սովորողների կողմից մշակութային ժառանգության և մշակույթների փոխառության ընկալման խնդրի հիմքում ընկած պիտի լինի ազգայինի և համամարդկային, միջազգային և տարածաշրջանային ներդաշնակության հարցերը: Նոր սերնդի մերձեցումը ազգային մշակույթին կդառնա մեր ժամանակների արդի մանկավարժական խնդիր, քանի որ յուրաքանչյուր ազգ ոչ

միայն պահպանում է պատմականորեն ձևավորված դաստիարակչական ավանդույթները, այլև ձգտում է ապագայում դրանք փոխանցել հաջորդ սերունդներին՝ ազգային դիմագիծն ու ինքնությունը չկորցնելու նպատակով:

Յուրաքանչյուր անհատի ուղին դեպի համաշխարհային մշակույթ, կայանում է էթնիկական մշակույթների միասնության և փոխադարձ շփման, ինչպես նաև իրազեկման միջոցով ազգային մշակույթի հոգևոր արժեքների հիման վրա: Էթնոպոլիկ մշակույթի հիմքը այլ մշակույթների, այլ մարդկանց հետ երկխոսության կազմակերպումն է, նրանց արժեքների ընկալումը, փոխըմբռնումը և ընդունումը:

Քաղաքացիական կոմպետենտության ձևավորման համար անհրաժեշտ է նախ ձևավորել կարողություններ և սովորողների, և մանկավարժների մոտ, որոնք կյանքի տարբեր պայմաններում՝ ուսուցման (ինքնակրթության) տարբեր իրավիճակներում կկարողանան որոշում կայացնել՝ ճգնաժամի և ռիսկի պայմաններում, խնդիրները, բացահայտել և տալ լուծումներ, նպատակային և պատասխանատու գործողությունների իրականացել, զարգացնելով կրեատիվ և քննադատական մտածողությունը:

Գրականություն

1. **Գալոյան Ս.** «Մտահասական մոտեցումը հանրակրթության մեջ», Մանկավարժություն, 2013թ., № 3, էջ 5-23:
2. **Գասպարյան Ա. Մ., Պողոսյան Գ.Ս.,** Գավրիլին Ա. Քաղաքացիական կոմպետենտությունը ձևավորվում է դպրոցից: Մանկավարժական միտք, 2018թ. N3, էջ 62-68:
3. **Խառատյան Հ.Ս.** Տոնը և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում: Մենագրություն, Երևան; ՀՀ ԳԱԱ "Գիտություն", 2011թ., 616 էջ:
4. **Гаврилин А.В.** «Воспитание в провинции» или воспитание «Всем миром»?// Народное образование. 2015. № 9. с. 143-148.
5. **Гаврилин А.В.** Полиэтнокультурный подход в воспитании // Международный научно-исследовательский журнал. 2016. № 1-4 (43). С. 13-15. практики».- Чебоксары, 2014 - 364с. с.4-6.
6. **Гаврилин А.Б., Гаспарян А.М.** Методология формирования гражданской компитентности. Материалы всероссийской, с международным участием, научно-практической конференции “Воспитать гражданина” (09.04.2019 г. Владимир), с. 14-19.
7. **Захаров Р.Г.,Тихонова С.В.,** Организация самостоятельной поисково-исследовательской деятельности учащихся и студентов - как метод эффективного освоения культуры окружающего социума // Воспитательная система школы: вызовы современности - Йошкар-Ола, 2012.

8. **Зимняя И.А.** Ключевые компетенции новая парадигма результата современного образования /И.А. Зимняя // Эйдос: Интернет журнал. 2006. http://www.eidos.ru.
9. **Иванова Е.О.** Компетентностный подход в соотношении со знаниевоориентированным и культурологическим /Е.О. Иванова // Эйдос: Интернет журнал. 2007. http://www.eidos.ru
10. **Куликова Л.В., Андреева В.В.** Субкультура воспитательной системы школы как альтернатива современным молодежным субкультурам. // Воспитательная система школы: вызовы современности. – ЙошкарОла. 2012. – С. 123-145.
11. **Матин Б., Гаспарян А., Погосян Г.** Традиции как основа формирования гражданской компетентности старшеклассников в контексте армянской культуры// Европейский союз ученых, 2018, № 5 с.58-63.
12. **Морозова С.А.** Гражданское образование как понятие и педагогическое явление, Вестник Герценовского университета, выпуск N6/2008 http://cyberleninka.ru/article/n/grazhdanskoe-obrazovanie-kak-ponyatie-i-pedagogicheskoe-yavlenie#ixzz3lQNqXKB5 (ɯjg` 10.06.2020)
13. **Овечкин М.И.** О некоторых условиях формирования общ ественно-значимых ценностей учащихся. //Наука, образование, общество: тенденции и перспективы. Сборник научных трудов по материалам Международной научно-практической конференции. Часть 3, Мин-во обр. и науки-М :"АР-Консалт", Москва, 2013. с. 26-29.
14. **Abramyan N., Gasparyan A., Poghosyan G.** Integrated approaches in environmental education. Psychological aspects of the project technology. Proceedings of International scientific-practical conference 18-19 April. Vladimir, 2014, pp.147-149.

ФОРМИРОВАНИЕ ГРАЖДАНСКОЙ КОМПЕТЕНТНОСТИ СТУДЕНТОВ В КОНТЕКСТЕ ЭТНОКУЛЬТУРНЫХ ТРАДИЦИЙ

Погосян Г. С. (НАН РА, Ереван, Армения)
Гаспарян А. М. (НАН РА, Ереван, Армения)

Цель исследования - повышение гражданской компетентности студентов образовательных учреждений за счет внедрения этнокультурных традиций.

Во всем мире обострились национальные проблемы, возникли конфликты, для решения которых необходимы новые формы межкультурного и межэтнического взаимодействия.

В рамках исследования была проанализирована ситуация, изучены культурные традиции и ценности армян, а также народов, проживающих в

Армении, проведено двухэтапное социологическое исследование, проанализированы его результаты и даны соответствующие рекомендации.

Из анализа результатов стало ясно, что изучение традиций и обычаев приводит к развитию культуры своего и других народов, формируется любовь, ответственность и отношение к Родине и Стране.

Общество объективно нуждается в формировании грамотного гражданина, который сможет наиболее полно реализовать гражданские права, обязанности, будет иметь гражданскую позицию, будет участвовать в процессах, осуществляемых в стране. Этнокультурные обычаи напрямую способствуют формированию у учащихся гражданской компетентности, внедрение которой в образовательные учреждения создаст потенциальную возможность для их применения.

Для формирования гражданской компетентности, в первую очередь необходимо развить навыки среди учащихся и преподавателей, которые в различных жизненных условиях (включая кризис и риск), в различных образовательных (самообразование) ситуациях смогут принимать решения, выявлять проблемы и предлагать решения, а также предпринимать целенаправленные и ответственные действия, развивая творческое и критическое мышление.

Ключевые слова: *гражданская компетентность, этнокультура, культурные традиции, обычаи, социологический опрос.*

THE DEVELOPMENT OF STUDENTS‘ CIVIC COMPETENCE IN THE CONTEXT OF ETHNOCULTURAL TRADITIONS

Poghosyan G. S. (NAS RA, Yerevan, Armenia)
Gasparyan A. M. (NAS RA, Yerevan, Armenia)

The goal of the research is to increase the civic competence of students in educational institutions by involving ethno-cultural traditions.

All over the world, national problems have aggravated, conflicts have arisen, for the solution to which new forms of intercultural and interethnic interactions are needed. Within the framework of the study, the situation was analyzed, the cultural traditions and values of the Armenian, as well as of peoples’ living in Armenia were studied, a two-stage sociological study was carried out, its results were analyzed and relevant recommendations were made.

From the analysis of the results it became clear that the study of the traditions and habits leads to the development of the culture of one's own people և other nations and love, responsibility and an attitude towards the Motherland and the Country is formed.

Society has an objective need to form a competent citizen, who will be able to implement civil rights and obligations in the best way, who will have civil position and participation in the processes taking place in the country. The ethnocultural habits directly contribute to the formation of students' civic competence, and the inclusion of them into educational institutions will create potential opportunities for that. In order to build civic competence, first it needs to deveop skills among learners and educators who, in different life conditions (including crisis and risk), in various educational situations (as well as self-educational), will be able to make decisions, identify problems and propose solutions, as well as take targeted and responsible actions, developing creative and critical thinking.

Keywords: *civic competence, ethnoculture, cultural traditions, customs, sociological survey.*